ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 233 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 125-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 03517269) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի մարտի 10-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Խնամատարության և համայնքահեն ծառայությունների որակի բարելավում, աջակցություն երեխաների պաշտպանության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի մասին» N 125-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սենսեյ» Մարքեթինգի Ակադեմիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00105515) 2026 թվականի մարտի 23-ին կնքված՝ թիվ 03-2026 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի ապրիլի 13-ից մինչև 2026 թվականի մայիսի 29-ն ընկած ժամանակահատվածում հանրային կարծիքի լայնածավալ ուսումնասիրության

և իրազեկման քարոզարշավի ռազմավարության մշակման ծառայությունների մատուցում՝ 7,291,375 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱԱՌ Հոթել» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03032593) 2026 թվականի ապրիլի 2-ին կնքված՝ թիվ 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի ապրիլի 13-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 3,083,210 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

22.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ